

# Ք Ա Ժ Ն Ե Գ Ի Ն

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգիրն է՝ բոլոր երկիրներու համար՝ ԱճԳԼ Շիլին 6:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

Հասցէ՝ Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcat Arménien, Jérusalem-Palestine

## ՍԻՈՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Երուսաղէմէն՝

Գեր. Տ. Մեսրոպ Ս. Արք. Նշանեան, Արժ. Տ. Կորիւն քհնյ. Շահինեանին (Կ. Պոլիս):  
Հոգ. Տ. Մուշեղ Վրդ. Հայրապետեան՝ Հոգ. Տ. Հրազդան Արդ. Ոսկերչեանին (Երուսաղէմ):

Հոգ. Տ. Վահան Վրդ. Գէորգեան՝ Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Քէլէմեանին (Անտիոք):  
Տիար Արշաւիր Գույումճեանին (Գահիրէ):

Սերապիւմի Հայոց Բարեսիրաց Միութեան:

Տիար Ալեքս Բաշայեանին (Դամասկոս):  
Ուրարակիր Միհրան Յովհաննէսեան՝ Տիկին Նուարդ Դարբինեանին (Գահիրէ):

Ժառանգաւորաց Սաներէն՝

Պրն. Վահրամ Պատմաճեան՝ Տիար Յակոբ Պատմաճեանին (Գահիրէ):

» Ստեփան Տարազճեան՝ » Յարութիւն Տարազճեանին (Նիկոսիա):

» Լեւոն Ալթունեան՝ » Սմբատ Ալթունեանին (Նիկոսիա):

» Օննիկ Թադէոսեան՝ » Յարութիւն Թադէոսեանին (Գահիրէ):

» Յակոբ Համբրիկեան՝ » Գրիգոր Համբրիկեանին »

» Յարութիւն Սէրայտարեան՝ Տիկ. Ջապէլ Ալեանաքին (Կ. Պոլիս):

» Յարութիւն Սէրայտարեան՝ » Արաքսի Սարային »

Հայֆայէն՝

Տիար Արրահամ Բարազեան՝ Տիար Կարապետ Սարգիսեանին (Ալժէր):

Զակաղիկէն՝

Տիար Մուրատ Մէօթէմէտեան՝ Արժ. Տ. Յուսիկ Քհնյ. Ասթարճեանին (Շոգմէն):

Մարայէն՝

Տիար Հայրապետ Պարոնեան՝ Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Յովսէփեանին (Կալաց):

Սանդիսայէն՝

Բարեսէր ոմն՝ Տիար Ե. Առաքելեանի (Քալիֆօրնիա):

Զիւհաղիկէն՝

Տիար Յ. Թազճեան՝ Հոգ. Տ. Ղեւոնդ Արդ. Արապեանի (Զիւքաղ):

Նիւ-Եօրֆէն՝

Տիկ. Լուսի Զուգասըզեան՝ Հայ որդուհիի մը:

» Հայկանոյշ Կիրեղեան՝ Տիկ. Երուանդուհի Ասատուրեանի (Ն. Ե.):

Ուօրբրաունէն՝

Հայ Տիկնանց Միութիւնը՝ տեղւոյն Մատենադարանին:



Սիրելի Հայ Բարեկամներ ի սիրոս աշխարհի,

Ձեր Զուիցերիացի բարեկամը, Պ. Քլունզլը այս սարի կը բոլորէ իր Հայ ազգին մասուցած ծառայութեանց փառասուններոյ սարին: Լսեցի թէ այս առթիւ իմ Պէյրուսի բարեկամներս գեղեցիկ զաղափարը յղացած են իմ այս ծառայութեանս յոբելեանական հանդէսը տօնելու: Ես երբեք դեմ չեմ այս տեսակ հանդէսներու կազմակերպման: Բայց ջերմ փափաքս է որ այս հանդէսը կատարուի քիչ մը աւելի տարբեր ձեւով:

Ձեր բոլորին ծանօթ է որ այս սարի Լիբանանի լեռներուն մէկ բարձունքին վրայ ձեր ազգին համար նորածին մը աշխարհ եկաւ: Մենք մկրտեցինք զայն «Հայ Ազգային Բուժարան», ու ես ինքզինքս հպարտ կ'զգամ անոր գոյութեանը մասնակից ըլլալու համար:

Ես այսօր երբ կը խորհիմ թէ այս Յոբելեանական հանդէսին առթիւ, ըստ սովորութեան, պիտի ընդունիմ նուէրներ ու շնորհաւորութիւններ իմ ծանօթ ու անծանօթ բարեկամներէս, կը մտածեմ թէ աւելորդ է ինծի պէս ծերացած մէկուն նուէրներ ընելը: Բայց եթէ կայ մէկը որ կարօտ է նուէրներու, ափեկա ձեր Ազգային Բուժարանն է: Հետեւաբար, սիրելի Հայ բարեկամներս, ինքզինքս չափազանց տրախ պիտի զգամ եթէ ինծի համար իբր յարգանքի արտայայտութիւն ըլլալու նշանները ընէիք ձեր ազգին հիւանդներուն, քուտաններուն ու Ազգային Բուժարանին, հոգ չէ թէ քիչ կամ շատ փափակութիւններով: Եթէ կ'ուզէք յարգել զիս, ուղարկեցէ՛ք ձեր նուէրները *Mr. J. Künzler, P. O. B. 409, Beyrouth* իմ Յոբելեանական հանդէսին առթիւ:

Նոյնպէս, եթէ այս նամակիս ընթերցողներուն մէջ կը գտնուին մարդիկ որոնք զիս կը սիրեն, ու ինծի պէս իրենց կեանքին իրիկնամուտին մէջ են, թող այս կոչը արձագանգ գտնէ անոնց ալ արջին մէջ, ու եթէ իրենց վերջին կտակը կը պատրաստեն, թող չը մոռնան իրենց Ազգային Հիւանդանոցը:

Սիրելի Հայ Բարեկամներ, իմ Յոբելեանիս առթիւ թող այս կոչս զրգիւս մը ըլլայ միշտ յիշելու Լիբանանի բարձունքին վրայ ծաղկող Ազգային հիւանդանոցը, ինչպէս նաեւ ձեր Զուիցերիացի ծերունի բարեկամը,

J. KUNZLER

---

**ՄԱՍԼՈՅ ՏԱԿ Է**

**ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ**

**ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՈՇԵԱՆՔ**

**ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

**ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ**

**ՀՈԳԵԻՈՐ ԿԵԴՐՈՆՆԵՐ ԵՒ ԳԼԱԶՈՐԻ ԲԱՐՁՐ ԴՊՐՈՅԸ**



[500]

# ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՈՒՐԾԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ, ԹԻՒ 13

## ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԷՕՄԻԻՐՃԵԱՆԻ

ՅԱԻԵԼԻՆԻ

Ա. ԹՈՒՂԹԵՐ, Բ. ՈՒՂԵՐՁՆԵՐ,  
Գ. ԳԱՆՁԵՐ ԵՒ ՈՂԲԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ  
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆ



ԵՐԱՅԱՆԱԳԵՄ  
ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ  
1939

ԷԶ՝ ՃԻԴ + 715

ԳԻՆ՝ 4 ՇԻԼԻՆ